* * *

Ոչ խանդս է մարել,
Ոչ մուզաս մեռել –
Սակայն չեմ կարող
Այժմ բան գրել։

5 Կարծես թե օդում,
Կարծես իմ սրտում
Մի թույն է <1 անընթ.>
Մի խորշակ խեղդում։

Ըղձեր ու տենչանք,
10 Թախիծ ու տանջանք,
Բոլորը տկար
Նիրհում են անկյանք։

Եվ հողմանման
Կորչում է անձայն
15 Սրբազան շունչը
Ոգևորության։

Ոչ, ես չեմ կարող
[Ձեզ] համար գրել
[Ձեզ ոգևորող]
20 Թեկուզ երկու տող։

Այս միայն կըգրեմ,
Միշտ էլ կը խնդրեմ,
Որ ինձ հավատաք,
Երբ որ ասում եմ –

25 Ոչ խանդս է մարել,
Ոչ մուզաս մեռել,
Սակայն չեմ կարող,
Չեմ կարող գրել։